ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1528-Ա/2 06 նոյեմբերի, 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ի N 704-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», «ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ», «ՌՈԲՈՏԱՏԵԽՆԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 984-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 4-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունիսի 8-ի N 704-Ա/2 հրամանի համաձայն

կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Արհեստական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ռոբոտատեխնիկա» մասնագիտություններով գիտական թեմաների հայտերի մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական թեմաների ֆինանսավորումն սկսել 2020 թվականի նոյեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

Նախարար **Արայիկ Հարությունյան**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«06» նոյեմբերի 2020 թ.
N 1528-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ի N 704-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», «ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ», «ՌՈԲՈՏԱՏԵԽՆԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	20TTAT-AIa014	Մեքենայական ուսուցմամբ հզորացված կանխազգուշացնող անալիտիկա, ամպային տվյալների կենտրոնների համար	Պողոսյան Առնակ Վալերիի	ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
2	20TTAT-AIa024	Կիսավերահսկվող ուսուցման ալգորիթմների հետազոտում	Խաչատրյան Հրանտ Հարությունի	«ԵՐԵՎԱՆԷՆ» գիտակրթական հիմնադրամ
3	20TTAT-QTa003	Քվանտային ինֆորմացիա և մեքենայական ուսուցում՝ ընդհանուր մոտեցումներ և գործիքներ	Ալլահվերդյան Արմեն Էդուարդի	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ

4	20TTAT-QTc004	Հեռահար բազմաչափ խճճվածության դետերմինիստիկ գեներացիան քվանտային հաղորդակցության համար	Գոգյան Անահիտ Լյովայի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
5	20TTAT-QTa009	Կիտաևի տորիկ կոդը և եռաչափ մոդելների ինտեգրելիությունը	Սեդրակյան Արա Գրիգորի	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
6	20TTAT-RBe016	Կոլեկտիվ արհեստական բանականությամբ ինքնակազմակերպված անօդաչու թռչող սարքերի երամի վթարակայուն մշտադիտարկման և նպատակային առաջադրանքների իրականացման ծրագրային համակարգ	Պողոսյան Վահագն Սուրենի	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
7	20TTAT-RBa023	Կառավարելի բարձր մթնոլորտային հարթակ	Խաչատրյան Վաչիկ Հրաչյայի	«ԱՅԱՍ» տիեզերագիտական ընկերություն ՀԿ